

Արձանագրություն թիվ 03

*Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ ՊՈԱԿ-ի մանկավարժության ֆակուլտետի
12.09. 2014թ. խորհրդի նիստի*

Նիստին մասնկացում էին խորհրդի 17 անդամներից 16-ը՝ Ռ. Մարդոյանը /մանկ.ֆակ. դեկան, խորհրդի նախագահ/, Լ. Գևորգյանը /քարտուղար/, Լ. Հակոբյանը, Լ. Ղուկասյանը, Լ. Միքաելյանը, Օ. Պողոսյանը, Կ. Սահակյանը, Ց. Կոչոյանը, Կ. Եղոյանը, Ա.Կիրակոսյանը, Ա. Տոնոյանը, Լ. Միքաելյանը, Հ. Այվազյանը, Ս. Մարգարյանը, Հ. Սուքիասյանը, Մ. Վարդերեսյանը:

Նախագահ՝ դեկան, մ.գ.դ. Ռ. Մարդոյանը:

Օրակարգում՝

1. 2014-1015 ուստարվա ուսանողների /առկա, հեռակա/ պրակտիկայի վայրերի հաստատում:
2. Ուսումնական խորհրդատուների հաստատումը՝ ըստ կուրսերի /պայմանավորված ուսանողների քանակով /:
3. 2014-2015 ուստարվա ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի /ուսման զեղչեր, կրթաթոշակ, փոխատեղում/ կազմի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1. Հսեցին – Դեկանի հաղորդումը 2014-1015 ուստարվա ուսանողների /առկա, հեռակա/ պրակտիկայի վայրերի հաստատման մասին:

Արտահայտվեցին – Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը, Կ. Սահակյանը, որոնք ներկայացրեցին 2014-1015 ուստարվա ուսանողների /առկա, հեռակա/ պրակտիկայի վայրերը:

Որոշեցին - Հաստատել 2014-1015 ուստարվա ուսանողների /առկա, հեռակա/ պրակտիկայի վայրերը:

2. Հսեցին – Դեկանի հաղորդումը ուսումնական խորհրդատուների հաստատման մասին՝ ըստ կուրսերի:

3. Արտահայտվեցին – Լ. Միքաելյանը, որը ներկայացրեց ուսումնական խորհրդատուների ցուցակը՝ ըստ կուրսերի:

Որոշեցին - Հաստատել ուսումնական խորհրդատուների կազմը:

3. Հսեցին – Դեկան Ռ. Մարդոյանի հաղորդումը ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմի հաստատման վերաբերյալ:

Արտահայտվեցին – Լ. Ղուկասյանը, Կ. Սահակյանը, Լ. Միքաելյանը:

Որոշեցին – Հաստատել ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը՝ հետևյալ կազմով.

- Ռ. Մարդոյան /մանկ. ֆակ. դեկ/,
- Լ. Հակոբյան /տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ/,
- Լ. Ղուկասյան /մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ/,
- Լ. Աթանեսյան /կերպարվեստի և երաժշտության ամբիոնի վարիչ/,
- Կ. Սահակյան /հոգեբանության ամբիոնի վարիչ/,
- Ա. Տոնոյան /ֆակուլտետի արհկոմի նախագահ/,
- Հ. Այվազյան /ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ/:

Ընթացիկ հարցեր –

1. **Լսեցին** – Մանկավարժության և սոցիալական աշխատաբքի ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանի հաղորդումը կրթության կազմակերպում 2-րդ կուրսի <<Ներառական կրթություն>> դասընթացի անվանումը փոխելու վերաբերյալ:

Արտահայտվեցին – Լ. Գևորգյանը, Ա. Տոնոյանը, Կ. Սահակյանը:

Որոշեցին – Ուսումնամեթոդական վարչություն հաստատման ներկայացնել մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի նիստի հետևյալ որոշումը՝ 1. Դասընթացի անվանումը ձևակերպել <<Ներառական կրթության տեսություն և պրակտիկա>>:

2. Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն առարկայի ծրագիրն ու օրացուցային պլանը:

2. **Լսեցին** – Ֆակուլտետի խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու հարցը:

Արտահայտվեցին - Հ. Այվազյանը, Ս. Մարգարյանը:

Որոշեցին – Ֆակուլտետի խորհրդում Ս. Մարգարյանի, Հ. Սուքիասյանի փոխարեն ընդգրկել հետևյալ ուսանողներին՝ Մ. Միքայելյան, Ա. Շաբոյան:

*Նիստի նախագահ՝ մանկ. ֆակ. դեկան՝ /Ռ. Մարդոյան/
Քարտուղար՝ /Լ. Գևորգյան/*